№ 47 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 24 **1897** ՀԻՆԳՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 24 № 47

ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է „ՄՇԱԿ“

(25-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅ 1897 ԹԻԱԿԱՆԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Տարեկան գինը՝ 10 ռուբլի, կէս տարվանը՝ 6 ռուբլի

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction «MSCHAK»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գերմանիան և Յունաստանը. Արեւելեան հարցը և ֆրանսիական ակադէմիան. Ի՞նչ է ուզում Մակեդոնիան.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Հայոց թատրոն. Տգեղ երեւոյթներ. Նամակ Ախալքալաքից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Հայրենասէր հելլենուհին. Պատերազմի դաշտից. Դարձեալ հայ սրբերի մասին.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆԸ

I

Գերմանական լրագիրները երկու երեք տարի է, ինչ պառել են զօթական տառերով հրատարակվող „Իզդամներ“, „Սաբահներ“, „Թարիգներ“: Թիւրքական ոսկիները ոչ մի տեղ այնպէս հրաշագործ չէին, ինչպէս Գերմանիայում, այն մամուլի մէջ, որ մի քանի տարի առաջ փողով ծառայում էր Բիսմարկին և ստացել էր նրանից „Սողունների բանակ“ անունը:—Այդ բանակը այժմ զինվել է փոքրիկ Յունաստանի դէմ լոկ այն պատճառով, որ սա յանդգնել է սուր բարձրացնել իր պատիւը պաշտպանելու համար: Մենք անարդար կը լինէինք, եթէ այդ թիւրքամոլութեան տենդը վերագրէինք լոկ թիւրքական ոսկիներին: „Սողունների բանակը“ ոգեորվում է և վերեւից եկող ներշնչումներով: Զը գիտենք ինչպէս է բիւրքերների Գերմանիան. նրա ձայնը վաղուց է մարել և աշխարհ չէ դուրս գալիս: Բայց որ պաշտօնական Գերմանիան, երկաթի և արեան Գերմանիան բոլորովին համամիտ է զօթական „Իզդամներին“, այդ անհերքելի է:

Ահա մի փաստ: „Kölnische Zeitung“ լրագրի մէջ տպվեց մի կիսապաշտօնական յօդուած, որ ներկայացնում է գերմանական դիպլօմատիայի կարծիքը յոյն-թիւրքական պատերազմի մասին: Լսենք թէ ինչ են ասում Բիսմարկի աշակերտները: „Այն փաստը՝ թէ Թիւրքիան առաջինն էր որ պատերազմ հրատարակեց, բոլորովին չէ փոխում իրերի դրութիւնը: Մենք արդէն արձանագրեցինք յոյների լիրբ խորամանկութիւնը. նրանք գաղտնագողի զրգռում էին Թիւրքիան մասնաւոր մարդասպանների և հրձիգների միջոցով, ի նպատի ունենալով, պատերազմ յարուցանելուց յետոյ, հրաժարվել իրանց ապստամբ կամաւորներից և դանդատվել ամբողջ աշխարհի առաջ մահմեդական զինւորների արիւնռուշա գործերի վրա և ցոյց տալ թէ անհրաժեշտ է զէնքը ձեռքին պաշտպանել սրբազան Եկլադան: Սրանք հնարներ են, որոնք արժանի են ծովային աւազակներին, բայց ոչ թէ կուլտուրական ազգին, որ անտանելի կերպով պարծենում է իր կուլտուրայով“: Այնուհետև Թիւրքիան մի անմեղ դառն ձեւացնելով, կիսապաշտօնական յօդուածը շարունակում է Յունաստանի մասին. „Ով չէ ուզում լսել ուրիշներին, պիտի վնասվի: Թեթեւամտութիւնը և սընանկութեան լրբութիւնը կարեկցութեան արժանի չեն: Եթէ հրդեհը շատ չի տարածվի, ինչ որ յուսալի է, այդ բանի մէջ դեռ չէ կարելի ընդունել Յունաստանի կողմից արած որ և է երախտիք: Պետութիւնների առաջին գործն է—որոշ սահմանների մէջ պահել հրդեհը: Դրա համար ամենալաւ միջոցն է անյապաղ օգնել Թիւրքերին յանուն մարդասիրութեան և եւրոպական պետութիւնների շահերի“:

Գերմանական դիպլօմատները, ինչպէս ցոյց է տալիս այս հատուածը, սաստիկ վրդովված են տեսնելով, որ Յունաստանը անազնիւ միջոցներով է պատերազմ յարուցել: Նրանք խօսում են կուլտուրայի անունից, գանում են որ մի կուլտուրական ազգին անվայել է աւազակային միջոցների դիմել: Մեր գործը չէ այս ճաստիկ մեղադրանքի առաջ պաշտպանել Յունաստանը, ընդունում ենք նոյն իսկ որ Աթէնքի կառավարութիւնը գուցէ ունի գործեր, որոնք այդ մեղադրանքներին նմանութիւն ունեն: Մեզ աւելի հետաքրքրում է մեղադրողը: Ի՞նչ կասէ գերմանական դիպլօմատիան, եթէ մէկը կանգնէ նրա առաջ և ասէ. „Երդվիր թէ դու ինքդ մաքուր ես, հաստատիր թէ միջազգային իրաւունքի ոտնահարութիւնը, քաղաքական խաբէութիւնները, ամենաստոր կեղծիքները աշխարհի մէջ տարածվել են ոչ թէ Գերմանիայից, այլ մի ուրիշ երկրից“: Ինչ կասէ այդ դիպլօմատիան: Ինչ կասէ, եթէ նրա առաջ բաց անեն նորագոյն Գերմանիայի պատմութեան էջերը: Այդ էջերից մի քանիսը կը բանանք միւս անգամ:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱԿԱԴԷՄԻԱՆ

«Figaro» լրագիրը դիմել է ֆրանսիական ակադէմիայի «անմահներին» խնդրելով, որ նրանք իրանց կարծիքը յայտնեն արեւելեան հարցի այժմեան վիճակի, և յատկապէս Ֆրանսիայի այդ խնդրում բռնած քաղաքականութեան մասին: Առաջ ենք բերում «անմահներից» ամենից ձեռնհասների յայտնած կարծիքները:

Ֆրէյսինէ,—նախկին մինիստր-նախագահ,—հիմնվելով վերջերումս սենատում իր խօսած նշանաւոր ճառի վրա, իղձ է յայտնել, որ Ֆրանսիան՝ «հաւատարիմ իր անցեալին և իր ոգուն, պաշտպան դառնայ ազատութեան և մարդկայնութեան գաղափարին և միւս ազգերի հետ միասին՝ իր դրօշակի ծալքերի մէջ իրաւունքի դատը պատսպարող հանդիսանայ»:

Դը-Բրոյլի դուքսը, նախկին արտաքին գործերի մինիստրը, բաւական անորոշ պատասխան է տուել. «Մտել ենք եւրոպական համերաշխութեան մէջ: Լաւ ենք արել, թէ վատ: Ուրիշներն աւելի ուղիղ դատաւոր կարող էին լինել, քան ես՝ այս կէտում: Դժուար է այս միջոցին այդ կենցէրտից ետ քաշվել...»:

Էմիլ Օլիվիէ,—նախկին դիպլօմատ.—«իմ անփոփոխելի սկզբունքն է, որ երբ իմ երկրի կառավարութիւնը, որը և լինի, որոշ կերպով մտել է մի արտաքին գործի մէջ, ես միշտ և յամենայն դէպս նրա կողմն եմ:» «Figaro» գտնում է, թէ Օլիվէի այս յայտարարութիւնը բաւական հեռու է ֆրանսիական ներկայ դիրքին անպայման հաւանութիւն տալուց:

Անատօլ Ֆրանս, համակրելի գրողը, իր վերոյիշեալ դիպլօմատ ընկերների քաղաքական նրբութեան հակառակ, խնդիրը չատ պարզ կերպով է երևան հանում.—«Մեզ համար այսօր Արեւելեան խնդիրը դրամական խնդիր է դարձած և, յանուն մեր դրամատէրների՝ օսմանեան կայսրի հետ ունեցած համաձայնութիւնն է, որ հաղարաւոր մարդկային էակներ կորչում են և մենք թողնում ենք, որ արդարութիւնն ու մարդկութիւնը արտաւեն»...:

Ալբէր Վանդալ, նշանաւոր հեղինակ, որ չատ մօտ ծանօթ է արեւելեան գործերին, արդէն իր փետրվարի 2-ի ճառախօսութեան մէջ՝ յայտնել է իր խորին համակրութիւնը արեւելեան քրիստոնեաներին և առանձնապէս հայերին, ասել է. «Մենք կը ցանկանայինք տեսնել, որ Աբդուլ-Համիդի անարդ լուծը կրող բոլոր քրիստոնեայ ազգերը վերստանան իրանց ինքնավարութիւնը և այս լուծումն, որով Թիւրքերը դէպի Ասիա յետ մղված կը լինէին, ամենից աջող կը լինէր»:

Բայց ամենից ոգելից և եռանդուն պատասխանը տուել է Հանրի Հուսէ.—«Ետ քաշվել Հայաստանում, ուր կոտորում են,—ասել է համակրելի «անմահը»,—և միջամտել Կրետէում, ուր կռւում են. սելամալէքներ (Թրքական ողջոյն) անել սուլթանին, և թնդանօթի հարուածներով խօսել յունաց թագաւորի հետ, ոյժը դէմ հանել իրաւունքին, պաշտպանել կոտորողներին զոհերի դէմ, կիսալուսինը խաչի դէմ, անցեալը ապագայի դէմ, պաշտպանել վերջապէս Թիւրքերին, որոնք արեւելքի ժողովուրդները դերութեան և տգիտութեան մէջ ընկղմեցին, ընդդէմ յոյների, որոնց նախնիքը սովորեցրին մարդկանց՝ ազատ ապրել և մտածել,—ահա դիպլօմատիայի խորհրդաւոր դեղեցկութիւնները: Այս քաղաքականութիւնն ամենեին համաձայն չէ Ֆրանսիայի աւանդութիւններին և կասկածում եմ, թէ նրա զգացմունքներին էլ համաձայն լինի...»:

ԻՆՉ Է ՈՒԶՈՒՄ ՄԱԿԵԴՈՆԻԱՆ

Սկսելով պատերազմ Թիւրքիայի դէմ, Յունաստանը մեծ յոյս ունէր, որ Բալկանեան թերակղզու միւս փոքրիկ ազգութիւնները—սերբերը, բուլգարները, մակեդոնացիները նոյնպէս ոտքի կը կանգնեն և կաջակցեն յոյներին՝ Թիւրքերի դէմ: Մանաւանդ ապահով էր համարվում Մակեդոնիայի ապստամբութիւնը, որ վաղուց պատրաստվում է: Սակայն հակառակ այդ յոյսերին՝ Մակեդոնիան լուռ է մնում: Այդ լռութեան պատճառը ահա ինչով է բացատրում մակեդոնական բուլգարների օրգան «Մակեդոնիայի ձայն» լրագիրը. «Յունաստանը իր գրգռիչ վարմունքով ստիպեց սուլթանին պատերազմ յայտնել իրան: Մեր հայրենիքի հարաւային սահմանում կուտում է մեր բռնակալի հետ մի քրիստոնեայ ժողովուրդ՝ յոյն ժողովուրդը: Ո՞վ կը յաղթի: Ի՞նչ պէտք է անենք մենք: Ահա հարցեր, որ զբաղեցնում են ամենքին: Մենք ընկել ենք մուրճի և սալի մէջտեղ: Թիւրքերը—մեր չարչարողներն են և մենք ցանկանում ենք, որ նրանք պատալվեն, ցանկանում ենք նպաստել նրանց տապալման: Յոյները—մեր բարեկամները չեն, նրանք ցանկանում են սարկայնել մեզ, նրանք կամենում են գրաւել մեր հայրենիքը, նրանք դէմ են մեր ինքնավարութեան: Կարող ենք մենք այդ դէպքում օգնել նրանց: Մենք չենք ցանկանում յոյների դժբախտութիւնը. նրանք քրիստոնեաներ են և կրօնի միութիւնը նոյն իսկ հրաւիրում մեզ օգնել նրանց, բայց նրանց թշնամութիւնը մեզ հետ արգելում է մեզ օգնել նրանց: Մենք չենք կարող ինքնասպան լինել: Թող Յունաստանը չոտով յայտնի ի լուր ընդհանրութեան, որ նա պաշտպան է Մակեդոնիայի ինքնավարութեան և մենք պատրաստ ենք անմիջապէս նրա օգնութեան հասնել: Մենք ուրիշ բան չենք պահանջում մեր եղբայրներից և զրացիներից բացի այն, որ մեզ միջոց տրվի ապրել «մարդավարի»:

Մակեդոնիայի պահանջը՝ լինել ինքնավար և կատարելապէս ազատ, արդար և անվիճելի պահանջ է, և Յունաստանը՝ դաւաճանած կը լինի իր պատմութեան և ժամանակակից ձգտումներին, եթէ չը յարգի այդ պահանջը: Յունաստանը հրապարակով պէտք է յայտարարէ, որ իր նպատակն է ազատել Մակեդոնիան Թիւրքիայի ճանկերից, որ յետոյ նա ազատ կը լինի իր ցանկացածին համաձայն՝ տնօրինել իր ապագան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

„The affections of armed Powers“. By Dr. Garth Wilkinson. London, 1897.

Այս գրքի հեղինակ Ուիլկինսոն մի ծերունի անգլիացի է, տարիքը ութսունից անց: Նա նշանաւոր Էմիրսոնի բարեկամն է և յայտնի է իբրև գաղափարական մի մարդ: Ներկայ աշխատութեան մէջ նա պաշտպան է հանդիսանում փոքր պետութիւններին, համարելով սրանց այնպիսի տարրեր, որոնք թարմութիւն են մտցնում քաղաքակրթութեան մէջ: Նոր ձեւակերպութեամբ, Ուիլկինսոն հաստատում է փոքր ազգութիւնների մասին Կանտի և ուրիշների յայտնած հայեացքները:

Մեծ պետութիւնները, հեղինակի ասելով, չատ են փոքրացնում մարդու անձնաւորութիւնը, չատ են հեռացնում մարդկանց միմեանցից. մեծ ալիքների հետ կորչում են մանր հոսանքները, և մարդկային անձնաւորութիւնը, որ քաղաքակրթութեան նպատակակէտն է, փոխանակ ազդելու կեանքի վրա և փոփոխելու նրան, ինքը խաղալիք է դառնում և իբրև մի տաշեղ այս ու այն կողմ տարուբերվում:

Հեղինակը կարծում է, որ Անգլիային վերապահված է մի նախանձելի դեր համաշխարհային պատմութեան մէջ փոքր պետութիւնների վերաբերութեամբ: Անգլիան կարող է ժողովողի, միացնողի, չաղկապողի նախաձեռնութիւն վերցնել իր վրա և ոյժ տալով փոքր պետութիւններին կազմակերպվելու և միմեանց հետ կապվելու՝ կարողութիւն տալ նրանց ազատօրէն և կատարելապէս զարգանալ: Նոյն իսկ մեր օրերում նկատվում է, որ երբեմն ամբողջ մեծ երկիրներ կարծես թմրել են, ծերացել են և ոչ մի ներքին ցնցում այնքան ոյժ չունի, որ սթափեցնի նրանց: Փոքր պետութիւնները իրանց անմիջական կեանքով, իրանց երիտասարդական աշխոյժով զովութիւն և թարմութիւն են բերում, որ կարող է արդիւնաւէտ լինել և այն մեծ պետութիւնների կեանքի համար, որոնք այժմ անուշադիր են դէպի փոքր պետական մարմինները: Եթէ մարդկութիւնը պէտք է իր մէջ բովանդակի երկրագնդի մարդկանց բարոյական բարձր չափերը, նա պէտք է արտայայտի նրանց միացեալ կեանքը և ոչ թէ ստեղծի մի քանի պետական մեծ սալեր, որոնց մէջ, ինչպէս աղօրիքի մէջ, փշրվեն և ալացվեն միւս համայնքները և միութիւնները, դառնալով փոշի և բարոյական ոչնչութիւն:

Գ.

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Վաղուց է հայոց թատրոնում այնքան բազմութիւն չենք տեսել, որքան ապրիլի 22-ի սիրողների ներկայացման։ Հայոց ինտելիգենցիայի հետ միասին ներկայ էր և մեր դրամական-արիստոկրատիան, որ սիրում է իրան «բարձր» հասարակութիւն սխալ տիտղոսը տալ, և տարին հազիւ մի քանի անգամ շնորհ է բերում հայկական ներկայացումներին, և այն էլ՝ երբ խաղում են ծանօթ սիրողներ։ «Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը», որի օգտին տրվում էր այդ ներկայացումը, աւելի մեծ աջողութիւն սպասել չէր կարող։ Մեզ թւում է, որ պարոններ Ալէքսանդրով և Զեխով իրանք էլ շատ գոհ կը մնային, եթէ միջոց ունենային տեսնելու թէ սիրողների դեղեցիկ խաղի շնորհիւ, ինչ հրաշալի տպաւորութիւն թողեցին հասարակութեան վրա իրանց երկու անհամ պիէսները՝ առաջինի «Արի բաժանվենք» կոմեդիան, և երկրորդի «Առաջարկութիւն» վոդեվիլը, երկուսն էլ, որքան գիտենք, ծանօթ մեր բեմին։

Հին սիրողներից այդ օրը բեմ էին դուրս եկել իշխանուհի Ս. Արղութեան-Երկայնաբազուկ, որ վոդեվիլի գլխաւոր՝ կոմիկական դերի մէջ՝ իր համով խաղով մեծ զուարճութիւն պատճառեց հասարակութեանը, և պ. Վահան Մամիկոնեան, որ Շուբինի պատասխանատու և մեծ դերը կատարեց շնորհով (եթէ չը հաշուենք երրորդ գործողութեան մէջ անհայտ թուլութիւնը)։ Բայց գլխաւոր հետաքրքրութիւն, ի հարկէ, ներկայացնում էին նոր սիրողները, որոնք, մանաւանդ կանանց դերեր կատարողները, ցոյց տուեցին սպասածից աւելի բեմական շնորք։ Չենք կարող առանձնապէս մատնանիշ չանել օր. Մ. Իզմիրեանի վրա, որ կատարում էր տիկին Շուբինայի դժուար դերը։—օրիորդի արտայայտիչ միմիկան, խելացի, կենդանի խաղը, ազատ շարժուածքները շատ անգամ մոռացնել էին տալիս, որ դա սիրող է և ոչ թէ մի փորձված դերասանուհի։ Եթէ մենք իմանայինք, որ օրիորդ Իզմիրեան թատրոնական արհեստի սիրահար է, կասէինք նրան. «նուիրեցէք ձեզ հայոց աղքատ բեմին, որ այնքան աղքատ է կին-ոյժերով, և որի համար դուք մի թանկագին գիւտ կարող էք լինել»։ Երկու երիտասարդ և այրի կանանց դերերը սիրուն կերպով կատարեցին տիկիններ Ն. Մելիք-Փարսադանեան և Լ. Ծովհաննեան, որոնցից առաջինը՝ տ. Մելիք Փարսադանեան, որ կատարում էր աւելի մեծ դեր, վարձատրվեց մի գեղեցիկ ծաղկեփունջով։ Շատ տիպիական էր օր. Ն. Էմինեան՝ պառաւի դերում, և չատ վատահ բեմի վրա. իսկ միւսը՝ օրիորդ Օ. Էմինեան, վոդեվիլի մէջ այնքան աշխոյժ և կենդանի էր, որ մնում է ցանկալ՝ նորից նրան տեսնել բեմի վրա։ Տղամարդ սիրողներ՝ Պ. Դօլուխանեան, «կնոջ ձեռքում տանջված» ամուսնու դերում, Ս. Փրիդոնեան ու Յ. Աղամիրզեան «փողով աղջիկ որսող» փեսացուների դերում՝ նպաստեցին խաղի ընդհանուր աջողութեան։ Բոլոր սիրողները, որոնցից մի քանիսը հայերէնին չեն էլ տիրապետում, այնքան լաւ դիտէին իրանց դերերը, որ համարձակ կարող են օրինակ ծառայել հայոց ծոյլ դերասաններին և դերասանուհիներին, և թող այդ մասին բարեհաճեն հաղորդել նրանց՝ նախկին դերասան Ա. Մանդինեան և այժմեան դերասան Արաքսեան, որ այդ երեկոյ աջողութեամբ մասնակցում էին սիրողների խաղին։

*

ՏԳԵՂ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

(Նամակ գաւառից)

I

Մենք մի անգամ արդէն առիթ ունեցանք «Մշակի» էջերում նկատելու, որ մեր գաւառական գիւղական ժողովրդի բարոյական մակերևոյթը տարուց տարի ցածրանում է, նրա նահապետական պարզութիւնն ու չիտակութիւնը տեղի են տալիս ծածկամիտ խաբեբայութեան, կեղծիքի և այլ խաւար գործերի։ Բայց մենք այդ տխուր երևոյթը համարել ենք անցողական, սպասելով որ նոր կեանքի թարմ հոսանքը իր կատարեալ և լուսաւոր յաղթանակով վերջի վերջոյ կը սրբէ, կը մաքրէ ժողովրդի բնաւորութիւնը, կը լուսաւորէ նրանց մտքերը և կը տանէ ղէպի առաջ։

Սակայն ինչքան և մենք մեզ մխիթարենք յիշեալ օպտիմիստական ենթադրութիւններով և հայեացքներով, սպասելով լաւագոյն ժամանակի, այնու ամենայնիւ երբեմն գաւառական ժողովրդի հասարակական կեանքի մէջ այնպիսի դէպքեր են կատարվում, որ ամենալաւատես մարդն ապշում է, չէ կարողանում դայրոյթի և զզուանքի աղաղակ չը բարձրացնել։ Ահա ձեզ օրինակ Սուրմալու գաւառի կենտրոն Իգդիր աւանը. ամբողջ 1/4 դար այստեղ դպրոց է գոյութիւն ունեցել. տասնեակ ուսուցիչներ շատ սերունդներ են կրթել, գրագիտութիւնն ընդհանուր է, բայց և այնպէս մենք ապշած կանգ ենք առել այժմ՝ դպրոցի կոչման ու նպատակի բոլորովին հակառակ, մի կատարեալ բացասական երևոյթի առաջ։ Այս գիւղում ներկայումս մի խումբ տեղացի սրիկաներ իրանց գրագիտութիւնը և գրիչը գործ են դնում հարևանների անհատական և ընտանեկան պատիւը ամենատոր, ամենանամօթ կերպով արատաւորելու։

Խորին ցաւով ստիպված ենք արձանագրել, որ Իգդիրում այժմ ոչ ոք ապահով չէ, թէ առաւօտը զարթնելով նա չի տեսնի իր բազի դրանը փակցրած մի լպիրշ, մի անպատիւ յայտարարութիւն. բովանդակութիւնը.. այն բոլորն է, ինչ որ կարող են արտադրել փողոցային սրիկայի, գիշերային շրջմոլիկների մոլութիւնների մէջ ապականված ուղեղն ու երևակայութիւնը։ Մի օր սրանց կծու ակնարկութիւնների և ցինիական սրախօսութիւնների առարկայ է դառնում մի քահանայ և այդ յայտարարութիւնը կպցնում են նոյն իսկ եկեղեցու դրանը. որպիսի սրբապղծութիւն. մի ուրիշ օր մի վաճառական կամ արհեստաւոր է բամբասվում, մի այլ անգամ որ և է հաւեստ գործող, յեսոյ մի տիկին և այլն։

Արդարացի, թէ անարդարացի են այդ գիշերային յայտարարութիւնների մէջ եղած ակնարկներն ու անպատիւ սրախօսութիւնները, բոլորովին այդ չէ խնդիրը. այլ բանը նրանումն է, որ հակառակորդի հետ մրցելու այս միջոցն է զզուելի, և սրան դիմողներին համարձակ կարելի է անարգ և ցածահոգի մարդիկ անուանել։ Այսպիսի ստոր զէնքերով կռւում են միմիայն վախկոտ և ստորաքարշ մարդիկ, խաւարի զաւակներ, որոնք իրանց հակառակորդներին աշկարայ, օրը ցերեկով դիմադրելու քաջութիւնից զուրկ լինելով, գործում են խաւարի մէջ։

Մենք համոզված ենք, որ Իգդիրում չափազանց շատ են այն բարեմիտ մարդիկ, որոնք մեզ հետ միասին զայրանում են այս երևոյթի դէմ, և հէնց այդ մարդկանց վրա սրբազան պարտք է ծանրանում բոլոր հնարաւոր միջոցներով կռւել այդ զազիր սովորութեան դէմ։ Ցիմար է նա, ով կուրախանայ իր հակառակորդին այսպիսի ստոր ճանապարհով վիրաւորված տեսնելով. սա արատ է բերում ամբողջ համայնքին, քանի որ այս ստոր, ամօթալի գործի դեկավարներն ով և լինեն, այդ իսկ համայնքի զաւակներն են անչուշտ։ Միւս կողմից օրինակը վարակիչ է, և ներկայումս առանց որ և է դատարակութեան մնացած մեր մանուկները հեշտութեամբ կարող են զոհ գնալ այսպիսի գայթակղեցուցիչ հրապոյրների։

Ա. Ահարոնեանց

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

Ապրիլի 10-ին

Այս օրերս կայացաւ Բարեգործական ընկերութեան այստեղի ճիւղի ընդհանուր ժողովը։ Ներկայ էին միայն 26 անդամներ։ Ժողովը քննեց անցեալ տարվայ հաշիւը և վերաստուգող յանձնաժողովի զեկուցումը այդ հաշուի մասին։ Մուտք եղել է՝ անդամակցական վճարներ 62 հոգուց—310 ր. (փոխանակ 35 անդամներից նախատեսված 175 բուբլու), նուէրներ—150 ր. 40 կ., մի պարերեկոյթից և մի թատրոնական ներկայացումից—230 ր. 84 կոպ., տոկոս—48 ր. 41 կ., ընդամենը հաշուետարվայ ընթացքում մուտք եղել է—739 ր. 65 կ., առ. 1-ն յունվարի 1896 թուի մնացած 720 ր. 12 կոպէկի հետ ընդամենը եղել է 1459 ր. 77 կոպ.։ Ծախսը հետեւեալ կերպով է եղել. ուսումնառուներին—171 ր. 58 կոպ., տառապեալներին—222 ր. 94 կոպ., դիւանական ծախս 2 ր. 1 կոպ., 5% ֆոնդի համար—37 ր., ընդամենը ծախս եղել է—433 ր. 53 կ.։ Ուրեմն առ. 1 յունվարի 1897 թ. մնում էր 1026 ր. 24 կոպ., որ համաձայն նախահաշուի՝ յատկացրած է ճիւղի ապագայում ունենալի արհեստանոցի սկզբնական ծախսերին։

Մուտքի և ելքի բոլոր յօդուածները և յանձնաժողովի զեկուցման բոլոր կէտերը մի առ մի քննելով, ժողովը միաձայն վաւերացրեց վարչութեան անցեալ տարվայ հաշիւը, որից յետոյ նախագահ պ. Ա. Գրիգորեան առաջարկեց շնորհակալութիւն յայտնել վարչութեանը՝ նրա, թէկն հաւեստ, բայց նախատեսվածից աւելի աջող գործունէութեան համար, մասնաւորապէս անդամների թուի համարեա կրկնապատկվելու պատճառով, որ բացի նիւթական շահից՝ ունի և բարոյական նշանակութիւն։ Նախագահի այդ առաջարկութիւնը ընդունվեց միաձայն։

Յետոյ մտքերի փոխանակութիւն եղաւ ապագայ արհեստանոցի կազմակերպութեան մասին. բայց աւելի նպատակայարմար համարվեց, որ վարչութիւնը դրա վերաբերմամբ մանրամասն զեկուցում պատրաստէ և յատկապէս այդ նպատակով մի ընդհանուր ժողով գումարէ այդ հարցը քննելու։ Առ այժմ վարչութեան անդամները, օգտվելով պ. Յովհ. Խօջաէյնաթեանի առաջարկութիւնից (տես անցեալ տարվայ «Մշակ» № 137), իրանց սեփական բիսկով, ձեռք չը տալով վերև յիշած 1026 ր. 24 կոպէկ յատուկ գումարին, հրաւիրել են գիւմիւշխանցի երկու արհեստաւոր ամուսիններ և օրիորդաց դպրոցում (այժմս փակ) բացել են գործելու փոքրիկ արհեստանոց, ուր ներկայումս գործել են սովորում 4 աղջիկներ, աղքատ ընտանիքներից։ Գործում են լաւ մանուսաներ, խաւոտ և հասարակ երեսսրբիչներ, բաղանիքի ճերմակեղէն և այլն, որ իր դիմացկունութեամբ և գնով շատ ձեռնտու են։ Կարող են գործել «Վանայ շալեր», շատ նուրբ տեսակները։ Վարչութեան նպատակն է եղել թէ գործնականապէս ծանօթանալու այդ գործի հետ, թէ ապրելու միջոց տալու մի բազմանդամ գաղթական ընտանիքի և թէ հէնց հիմիկվանից արհեստ սովորեցնելու մի քանի աղջիկներին։ Օգտվելով հանդերձ այդպիսի վարպետների հմտութիւնից, վարչութիւնը ուզում է աւելի կատարելագործված գործիքներ ու մեքենաներ բերել տալ և այդ գործը աւելի լաւ ու կանոնաւոր հիմունքների վրա դնելու. մտադրութիւն կայ ուղղակի արհեստանոց դպրոց բանալ, մասնաւորապէս Կազանի զեմստվոյի նոյնանման հիմնարկութեան ձևով (Ткацко-прядильная школа въ г. Казани)։ Շուտով կը ձեռնարկվի կանոնադրութեան և ծրագրի մշակման գործին, որ կարելի լինի բանալու համար թոյլտուութիւն խնդրել։

Զ. Տ.—Գ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, ապրիլի 23-ին, Նորին Կայսերական Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆեօդորովնայի անուանակոչութեան տօնն էր։ Այդ առիթով քաղաքը զարդարված էր դրօշակներով։ Բոլոր դաւանութիւնների տաճարներում գոհացողական մաղթանքներ կատարվեցին։ Երեկոյեան քաղաքը լուսաւորված էր։

—

Մենք ստացանք Թիֆլիսում ապրող յոյներից հետեւեալ հեռագրական տեղեկութիւնը, որ նրանք ստացել են ապրիլի 22-ին. «Վելեստինայի մօտ յոյները յետ մղեցին թիւրքերին, առգին ջարդ տալով։ Միւս կէտերում կռիւը դեռ շարունակվում է։»

—

Երէկ դիշեր, ապրիլի 23-ին, Թիֆլիսում ապրող յոյների միջոցով ստացանք հետեւեալ հեռագիրը, որ ուղարկված է Բուխարեստից, ապրիլի 23-ից. «Կատաղի կռւից յետոյ, Վելեստինոյում, թիւրքերը յետ նահանջեցին։ Կռւի դաշտում սպանված թիւրքերի թիւը 2000 է, վիրաւորվածները բազմաթիւ։ Էպիրոսում, յոյները ամրանալով, յարձակում են գործել պէնդաբեգաղի վրա։ Ցունաց զօրքի տրամադրութիւնը շատ լաւ է։»

—

Վերջին ժամանակներս հայ երիտասարդներից շատերը ցանկութիւն են յայտնում գործնականապէս ուսումնասիրելու գիւղատնտեսութեան այս և այն բաժինը։ Կարծում ենք, ժամանակ, որ կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը լուրջ կերպով զբաղվի այդպիսի երիտասարդներին դիւրութիւններ տալու հարցով։ Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութիւնը կարող էր նպաստել այդ գործին գիւղատնտեսական հանրամատչելի գրքոյկներ հրատարակելով։ Իսկ Ներսիսեան դպրոցը կաչխատէր այս տարի էլ չը յետաձգել եօթներորդ դասարանի բացումը, որտեղ պէտք է աւանդվի և երկրագործութեան դասընթացք։

—

Մեզ հաղորդում են, որ Հարաւային Ռուսաստանից և Կովկասից չարունակ յոյն կամաւորների խմբեր են գնում Ադէնք՝ պատերազմին մասնակցելու համար։

—

Այս օրերս Պետերբուրգում, յայտնի հրատարակիչ Ֆ. Պավլենկովի հրատարակութեամբ, լոյս տեսաւ երիտասարդ բնագէտ-պօպուլիարիզատոր Վ. Լունկեվիչի մի մեծ աշխատութիւն՝ «Популярная Біологія» վերնագրով։ Երիտասարդ հեղինակն այս նոր աշխատութիւնը, գրված մատչելի և գրաւիչ լեզուով, ընթերցանութեան հարուստ նիւթ կարող է մատակարարել նրանց, որոնք ցանկանում են ծանօթանալ բիոլոգիայի հետ։ Գիրքը զարդարված է 200-ից աւելի պատկերներով, բաղկացած է 449 երեսից և արժէ 2 բուբլի։ Մենք կաչխատենք այդ գրքի մասին աւելի մանրամասն խօսել։

—

Մեզ հաղորդում են, որ ապրիլի 30-ին, ազնուականների թատրոնում, սիրողների մի խումբ տալու է հայերէն ներկայացում յօգուտ Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան։ Խաղալու են Օստրովսկու «Արդիւնաւոր պաշտօն» կոմէդիան։

—

Տեղեկութիւն է ստացված, որ երկաթուղիների գլխաւոր վարչութիւնը Վլադիկավկազի երկաթուղու ակցիոներական ընկերութեանը թոյլ տալով Բագուն Պետրովսկի հետ երկաթուղով միացնել, պայման է դրել, որպէս զի այդ ընկերութիւնը կապալով վերցնէ Անդրկովկասեան և Կարսի երկաթուղիների շահագործութիւնը։ Նախնական պայմանը ստորագրված է և, ինչպէս ասում են, նրա զօրութեամբ Վլադիկավկազի ակցիոներական ընկերութիւնը պարտաւորվում է՝ ի միջի այլոց՝ դէպի Պարսկաստան չարունակելու երկաթուղու գիծը։

—

Թիֆլիսի քաղաքային դուման, ձայնաւոր Եակիմովի առաջարկութեամբ, դիմել է կառավարութեան, որ թոյլ տրվի Թիֆլիսի դումային ունենալ իր ներկայացուցիչը անդրկովկասեան երկաթուղու վարչութեան այն խորհուրդների մէջ, որտեղ քննվում են տնտեսական այնպիսի խնդիրներ, որոնք վերաբերում են Թիֆլիսի և երկրի արդիւնագործութեան զարդացման։ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը այժմ հաղորդում է, որ այդ խնդիրը թողված է առանց հետեանքի։

—

Մեզ հաղորդում են, որ քաղաքային առաջիկայ ընտրութիւնների համար կազմված կուսակցութիւնները արդէն կազմել են իրանց թեկնածուների ցուցակները։ Այս անգամ առաջ ենք բերում հին, կամ «Դօվօրցօվայա» կոչված կուսակցութեան (որի մասին խօսեցինք անցեալ անգամ) կազմած ցուցակը։ Հին ձայնաւորներից.—Ալթանդիլով Մ. Զ., Ակօպով Ե. Մ., Ալիխանով Կ. Մ., Ալիխանով Ի. Ս., Անանով Ս. Յ., Արգուտինսկի Ա. Մ., Արգուտինսկի Ն. Վ., Արգուտինսկի Պ. Մ., Բուղդանով Ի. Ս., Բուտկեվիչ Կ. Վ., Վարդանով Ա. Ի., Վերմիշեվ Խ. Ա. Վեսցել Ֆ. Կ., Գլավացկի Պ. Ա., Դօլուխանով Մ. Ի., Եւանգուլով Գ. Գ., Իվանենկո Ա. Ա., Իոաննիսեանի Ա. Ա., Կարապետով Ն. Ի., Կոլուբանսկի Գ. Մ., Կորդանով Վ. Դ., Կորդանով Դ. Զ., Լունկեվիչ Մ. Վ., Մալինին Ե. Ի., Մելիքով Ի. Գ., Օդնօսումով Ա. Ի., Օպօչինին Պ. Ա., Օտտէն Ֆ. Կ., Պրիդոնով Ա. Ֆ., Սլիվիցկի Ս. Ա., Թայիրով Ի. Ա., Թամամշեվ Մ. Ի., Տէր-Աստուրով Գ. Բ., Ծովհանով Ի. Ի., Ծուրինով Ա. Ս., Շահազիզով—Կամսարական Ա. Ե., Շահպարոնեան Մ. Ս., Շերշենկո Ի. Ա., Շիմկեվիչ Ա. Պ., Էնֆիաճեաց Տ. Ա., Եակիմով Պ. Մ., Եարալով Գ. Զ., Խօսրօեվ Ե. Ե.։ Նոր մարդիկ.—Մղեբրով, Լ., Եւանգուլով Ա. Թաթուզով, Քեթխուդով, Միրզոյեվ Մ., Շադինով, Ջանչիեվ, Երիցփուլով, Ա. Գ., Խալաթով Թումանով Գ. Մ., Ճավճավաձէ, Մաչաբելի Մ., Ավալով, Մուխրանսկի Ա., իշխ. Գրուզինսկի, Ցերետելի,

Ջելօկայեվ, Ուտնելօվ, Բարխուդարօվ, Միքելաձէ, Անդրօնիկով, Օրբելեանի Ի. Մ., Էրիստով Ն., Սարաջեվ Դ. Զ., Բուրդարա, Ըէյտեր Կ. Մ.։ Ցուցակը դեռ լրացած չէ, և մի քանի անուններ պակաս են։ Մենք կը տպագրենք և «Կովկասեան» կոչված խմբի ցուցակը։

—

Թիֆլիսի դուման իր վերջին նիստում, որ տեղի ունեցաւ երկուշաբթի, ապրիլի 21-ին, որոշեց նոր սպանդանոց շինելու համար կէս միլիոն ռուբլու փոխառութիւն անել և դիմելով կառավարութեան՝ այդ փոխառութեան համար թոյլտուութիւն ստանալ։

—

ԹԷՄԻՐ-ԽԱՆ-ՇՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են. «Վերջապէս մեր հասարակութեան սրտում արձագանք գտաւ առաւելեալ գաղթականի ձայնը. վերջապէս մենք վճռեցինք բանալ մեր քսակների բերանները յօգուտ հաղարաւոր կարօտ ընտանիքների։ Սակայն այդ դէպքումն էլ հարկաւոր էր, որ մէկը մի քանի անգամ յիշեցնէր մեզ մեր պարտքը։ Գէորգ քահանայ Փարեմուզեանի խօսած երկու սրտաշարժ քարոզներից յետոյ միայն մենք յիշեցինք, որ մեզ համար Զատիկը բերում է ուրախութիւն, իսկ խեղճ գաղթականը նոյն րօպէին թաթախվելու մի ձու էլ չունէ։ Ճրագալոյցի երեկոյին և կիրակի օրը պատրաստին իշխանուհի օրիորդ Վառվառէ Արգուտինսկի-Երկայնաբազուկ և պ. Եղեցիխոսը գանձանակ ման ածեցին և ժողովեցին 86 ռուբլի, որը կը յանձնվի կառավարութեանը։ Ժողոված գրամը մենք քիչ ենք համարում Շուրայի համար։ Կօպէկների փոխարէն կարող էինք ռուբլիներ ձգել։ Սակայն լաւ է քիչ, քան ոչինչ։»

—

ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶԻՑ մեզ գրում են. «Քաղաքային ձայնաւորների մարտի 1 ի ընտրութիւնները արդէն հաստատված են նահանգապետի կողմից։ Ուրբաթ օրը, ապրիլի 18-ին, կայացաւ նոր ձայնաւորների առաջին ժողովը, որի գլխաւոր նպատակն էր ընտրել քաղաքագլուխ։ Ժողովին ներկայ էին 58 անձինք։ Ձայների մեծամասնութեամբ նախ 4000 ր. ռօճիկ նշանակեցին քաղաքագլխին և յետոյ քուէարկութեամբ, 37 ձայնով 20-ի դէմ, քաղաքագլուխ ընտրեցին Լօրիս-Մէլիքեան արհեստաւորաց ուսումնարանի տեսուչ Ա. Ֆ. Ֆռալկօվին։ Նախ քան ընտրութիւնների սկսվելը, ձայնաւորներից ամեն մինը, համաձայն իր կրօնի ծէսերին, երդվեց։ Ը նայելով որ հայ-լուսաւորչականները, ինչպէս հարկաւոր էր, հայոց քահանայի մօտ երդվեցին, այնու ամենայնիւ նահանգապետի կարգադրութեամբ նրանց երկրորդ անգամ, առանց քահանայի, ռուսաց լեզուով երդվեցրին։»

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ գրում են «Тифл. Листокъ» լրագրին. «Գանձակի նահանգապետ իշխան Նակաշիձէին, համաձայն նրա խնդիրքի՝ արձակուրդ է տրված, մինչև նահանգապետի պաշտօնից դուրս գալը։ Նահանգի կառավարութիւնը յանձնված է փոխ-նահանգապետ Եակօբսօնին։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լօրդ Սալսբիւրի ուղարկել է հայկական նպաստող ֆօնդի նախագահ Ռեստմինստրի դուքսին հետեւեալ նամակը, որ նա ստացել է Եգիպտոսի անգլիական ներկայացուցիչ Կրօմերից։

«Իմ տէր.

«Պատիւ ունեմ ներկայացնել սրա հետ միասին ձեր լօրդութեան Ալէքսանդրիայի հայ հասարակութեան նախագահ Պօղոս Նուբար փաշայի (որ Նուբար փաշայի որդին է) նամակը Եգիպտոսի մէջ ապաստանված հայ գաղթականների մասին։ Պօղոս փաշան յայտնում է, որ նորից Եգիպտոս եկած 700 գաղթականներին օգնելու համար միջոցներ չը կան։ Զմեռվայ ընթացքում թատրօնական և այլ բարեգործական հանդէսների միջոցով հայթայթվել էին գումարներ, բայց այդ աղբիւրները այժմ սպառվել են. իսկ Ալէքսանդրիայի յոյները այժմ զբաղված են կրետացիների օգնութեան գործով։ Ես հաստատացնում եմ Պօղոս փաշայի գրածները և յոյս ունեմ, որ ձեր լօրդութիւնը կը նպաստէք հայկական նպաստող ֆօնդի միջոցով օգնութեան գալու կարօտեալներին։»

Կրօմեր։

—

«Daily News» լրագրի վերջին համարում կարդում ենք. «Ապրիլի 24-ին, առաւօտեան, Անգլօ-հայկական ընկերութիւնը ստացաւ Վիէննայից Իզմիրլեան պարիարքի մի իւղանկար պատկերը, Գլաղստոնին իբրև նուէր ներկայացնելու համար։ Պատկերի նկարողն է Կրակովի կայսերական գեղարուեստական Ակադեմիայի պրոֆէսսոր Թէօդոր Աքսենտովիչ, որ Լեմբերգի հայ կաթոլիկների առաջնորդ Խակովիչի քեռորդին է և յայտնի է իբրև լաւ պատկերահան։ Իզմիրլեանի պատկերը շատ նման է իսկականին. նա սև մեսաքսեայ վերնազգեստ ունի հագած»։

—

«Daily News» լրագիրը, խօսելով Փոքր-Ասիայի մասին, երկիւղ է յայտնում, որ այնտեղ կարող են պատահել նոր կոտորածներ, որովհետև մահմեդական ժողովուրդը, թիւրք-յունական պատերազմի պատճառով, սաստիկ յուզված է քրիստոնեայ տարրի դէմ։

—

Դիարբեքիրի բրիտանական փոխ-հիւպատոսը ուղարկել է Լօնդօնի «Հայերի բարեկամների միջազգային ընկերութեան» քարտուղարին հետեւեալ հետաքրքրական նամակը։ «Պարոն, պատիւ ունեմ զեկուցանել, որ յունվարի 28-ի ձեր նամակի մէջ յիշված վեց հակ հագուստները ստացայ։ Ես դասաւորեցի հագուստները և շուտով կը բաժանեմ սպիտակեղէնը. իսկ մնացածը, այն է՝ վերնազգեստները պէտք է ծախեմ, որովհետև նրանք յարմար չեն այս երկրի ժողովրդի համար։ Տեղացիների վերնազգեստը կարմիր և սպիտակ գոյնից է, բնորոշ տարազով կարված և մի ձեռքը արժէ 2 շիլինգ 6 պենի։ Տեղական բնակիչները սովոր են այդ հագուստին և նրանք կը դերադասեն տկլոր մնալ, քան թէ հագնել ծիծաղաշարժ և նոյն իսկ վտանգաւոր «ֆրանկի» շորը»։ Ձեր Ուօֆ։

—

Մուշից ստացված են հետեւեալ տեղեկութիւնները. «Կառավարութիւնը Ռէտիֆ, Էհդիաթ Մսաֆիզ ամենայն փութկոտութեամբ կը հաւաքէ։ Մարտի 10-ին, Բաղէշի զինուորական ֆէրիք տեղս եկաւ, մղկիթներու և թէքէյէներու մէջ միշտ յորդոր կը կարդացուի իսլամութեան։ Տուրքերի և հարկերի գանձումն այն աստիճան սասկացեր է, որ քաղաք մարդ չը մնաց, գիւղեր ու լեռներ փախան։ Կանանց ամենահին ակունքներ, զոհարներ, զարդեր ու տնային անհրաժեշտ պիտոյքներ աճուրդի հանուել են։ 1000—1500 լիրայի տուն այժմ կարելի է առնել 100—150 լիրայով։»

ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՀԵԼԼԷՆՈՒՀԻՆ

—

Յունաստանի այժմեան հայրենասիրական շարժումը սկված է բարձրից, Յունաստանի առաջին մարդու, թագաւորի տանից։ Ինչպէս յայտնի է, յունաց կառավարութիւնը ներկայ տարվայ փետրվարին ուղարկելով գնդապետ Վասսոսին Կրետէ՝ այդ կղզին խաղաղացնելու և Յունաստանին միացնելու համար, մի և նոյն ժամանակ ծով ուղարկեց իր նաւատորմը, գլխաւոր հրամանատար նշանակելով թագաւորի Գէորգ որդուն։ Առաջին ժողովրդական ցոյցը, որ արտայայտում էր ժողովրդի հայրենասիրական եռանդը, տեղի ունեցաւ այն ժամանակ, երբ Գէորգը գնում էր իր պաշտօնը ստանձնելու։ Նրան արտասվելով ճանապարհեց թագուհի Օլգան, որ Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլաեվիչի աղջիկն է։—Երկրորդ ժողովրդական ահագին ցոյցը տեղի ունեցաւ Ա-թէնքում այն ժամանակ, երբ թագաժառանգը, Կոնստանտին, գնում էր Լարիսա՝ յունաց ցամաքային բանակի գլուխն անցնելու համար։ Թագաժառանգի հետ մի և նոյն կառքում նստած էր նրա կինը՝ իշխանուհի Սօֆիա։ Սա յետ չէ մնում իր ամուսնուց յունաց գործին հոգով և մարմնով ծառայելու մէջ և արդէն գրաւել է ամբողջ յոյն ազգի սէրն ու համակրանքը։

Հասնելով Լարիսա, իշխանուհի Սօֆիա բաց արաւ հիւանդանոց վիրաւորված զինուորների համար և վերադարձաւ Ա-թէնք, որպէս զի պատերազմը սկսվելուց յետոյ նորից գնայ գործող բանակը մայր թագուհու հետ, և անձամբ ձեռք առնէ «Կարմիր խաչի» ընկերութեան գործերը։

Իշխանուհի Սօֆիա գերմանական Վիլհէլմ կայսրի հարազատ քոյրն է։—Յայտնի է թէ ինչ դիրք է բռնել Հոհէնցօլէրների այժմեան ներկայացուցիչը Յունաստանի վերաբերմամբ։ Նրա քոյրը վճռական բօլէում ցոյց տուեց, որ ինքը մոռանում է իր գերմանական ծագումը և հելլէն ազգի հարազատ զաւակ է։ Ցայտնի է, որ նոնոյերս Վիլհէլմ կայսրը տօնեց իր պապի ծննդեան հարիւրամեակը. և երբ հանդէսներում ճառեր էր ասում գերմանական փառքի և մեծութեան մասին, մի և նոյն ժամանակ խրախուսում էր իր բարեկամ սուլթանին պատերազմ սկսել Յունաստանի դէմ։ Նա իր քրոջն էլ ուղարկել էր հրաւէր, որ գայ Բերլին՝ պապի տօնախմբութիւններին ներկայ լինելու համար։ Ահա թէ ինչ պատասխան ստացաւ նա իր քրոջից. «Ձեր մեծութեան նամակը սաստկացրեց այն կոիւը, որ իմ թոյլ կանացի սրտում կատարվում է դէպի իմ ծնողները և դէպի իմ հայրենիքը ունեցած սիրոյ մէջ։ Բայց միթէ կարող եմ ես ներկայ լինել բաղդատորների շրջանում այն ժամանակ, երբ իմ նոր հայրենիքը, որին ես նուիրել եմ իմ ամբողջ կեանքը, լցված է ամենախորին տրտմութեամբ։ Բացի դրանից, ես կարողութիւն չունեմ այստեղից հեռանալու և այն պատճառով, որ ամեն օր հարիւրաւոր տանջանքներ պահանջում են թեթեւութիւն իմ թոյլ ձեռքից»։

Բացի դրանից, լրագիրները հաղորդում են, որ երբ լուր հասաւ, թէ եւրօպական պետութիւնները վճռել են իրանց մարտանաւերով պաշարել Պիրէան, իշխանուհի Սօֆիան ասաց, որ այդ նաւերից արձակված իւրաքանչիւր ռումբը մի մի հարուած կը լինի և իր համար։ «Եթէ կանէայի ռմբակոծութիւնը,—աւելացրեց նա,—ճիշդ որ տեղի կունենայ, այն ժամանակ թող ամէնացի կանայք իջնեն ինձ հետ Ֆալէրօն, և ես կը խնդրեմ գերմանական նաւապետից, որ ամենից առաջ թնդանօթի հարուածը ուղղէ ինձ դէմ»։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏԻՑ

(Հեռագիրներ մայրաքաղաքի լրագիրներից)

—

Վիէննա, 17 ապրիլի։ Ապրիլի 14-ին և 15-ին, Ա-թէնքում ամղակլից ցոյցեր տեղի ունեցան։ Գէորգ թագաւորը հիւանդ է և պատրաստվում է ամբողջ ընտանիքով Կօրֆու կղզին անցնել։ Ժողովրդի դժգոհութիւնը սատկանում է և այն պատճառով, որ յունական նաւատորմը, որի վրա ամենամեծ յոյսեր էին դրած, մինչև այժմ անգործութեան է մատնված և չէ ռմբակոծում Սալոնիկը։ Դիմադրական կուսակցութեան ղեկավար Բալլի, որ ձգտում է խաղալ իր հայրենիքում Գամբէտտայի դերը, վերադառնալով Ա-թէնք (նա գնացել էր պատերազմի դաշտը իբրև կամաւոր) սաստիկ կրիտիկայի ենթարկեց զինուորական գլխաւոր շտաբի գործունէութիւնը։ Նա ասում է, որ իբր ոչ մի կռիւ տեղի չէ ունեցել Մատիում, այլ Լարիսան և Տիրնավօս անցել են թիւրքերի ձեռքը միայն յոյն զօրապետների անընդունակութեան և անպիտանութեան պատճառով։ Ա-թէնքում գանգատներ են լսվում և զանազան մութ անձնաւորութիւնների դէմ, որոնք գալով կամաւորների անունով, փախչում են պատերազմի դաշտից, երբ ամենափոքր վտանգ են տեսնում և դրանով շփոթութիւն են գցում յոյն զօրքի մէջ։

Լօնդօն, 17 ապրիլի։ «Standard» լրագրի հեռագիր։ «Յոյն թագաւորական ընտանիքի վիճակը անսպասելի կրիտիկական է։ Արդէն բոլոր միջոցները ձեռք են առնված, որպէս զի թագաւորական ընտանիքը հարկաւոր դէպքում իսկոյն թողնի երկիրը։ Ա-թէնքի բնակիչները մեղադրում են գահաժառանգին՝ Յունաստանի պարտութեան մէջ»։ Այդ առիթով հետեւեալն է գրում և «Berliner Tageblatt» լրագրի Լօնդօնի թղթակիցը. «Լօնդօնում Ա-թէնքից ստացված պաշտօնական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ յունաց մայրաքաղաքում մտքերը սաստիկ գրգռված են։ Նոյնը հաստատում են և բոլոր անգլիական թղթակիցները, որոնք հաղորդում են, թէ այն մարդիկ, որոնք առաջ պատերազմ էին պահանջում, այժմ մեղադրում են կառավարութիւնը դաւաճանութեան մէջ և պատրաստում են յեղափոխութիւն»։

«Times» լրագրի թղթակիցը հետեւեալ տեղեկութիւններն է հաղորդում այն ճակատամարտի մասին, որ տեղի ունեցաւ Մատիի մօտ և որ վճռեց Լարիսայի վիճակը։ Թիւրքերի յարձակումները Մատիի դէմ սկսվեցին ապրիլի 11-ին, վաղ առաւօտեան։ Կռիւը չարունակվում էր երկար, յոյները մեծ քաջութեամբ պաշտպանում էին իրանց դիրքերը։ Թագաժառանգը և պրինց Նիկոլայ գտնվում էին կրակի տակ և վերջինը, ինչպէս ասում են, շատ նշանաւոր հանդիսացաւ այս կռիւի մէջ։ Վերջապէս, երեկոյեան ժամի 6-ին թիւրքերը, ստանալով ուժեղ օգնական զօրք, խախտեցին յոյների շարքերը և այդ ժամանակ, ինչպէս հաւատացնում են, թիւրքայ հեծելազօրքի աջողութիւնը փայլուն էր։ Կէսօրից յետոյ հինգերորդ դիվիզիայի հրամանատար գեներալ Մակրիս իր օգնութեան կանչեց երկրորդ դիվիզիան, որի հրամանատարն է գնդապետ Մավրօմիխալիս, բայց սա տեղ հասաւ լոկ նրա համար, որ աջակցէ յոյների նահանջման։ Իրեկոյեան ժամի 6 ին Մավրօմիխալիս, որ մեծ քաջութիւն էր ցոյց տուել, հեռագրեց գնդապետ Սմօլենսկուն, որ հրամանատար էր Բէվենում. «Ես ջարդված եմ և նահանջում եմ դէպի Կաղակլար։ Վարվեցէք, ինչպէս հարկաւոր էք համարում»։

«Daily Chronicle» լրագրի թղթակիցը գրում է. «Թէև ուրբաթ օրը տեղի ունեցած կռիւը տանուլ է տուած, բայց պարզ է, որ շաբաթ օրը առաւօտեան սկսված նահանջումը կատարվեց կարգին։ Զօրքերը շարժվում էին երեք սիւներով, տանելով իրանց հետ բոլոր դաշտային թնդանօթները և ռազմամթերքները։ Յոյն զինուորները հարկադրված էին անընդհատ կռուել վեց օր համարեա առանց քնի և չը հեռանալով պատերազմի դաշտից։ Դրանով է բացատրվում այն աջողութիւնը, որ ունեցան թիւրք հեծելազօրքի յարձակումները, որոնցով Էդհէմ-փաշա յոգնեցնում էր յոյներին։ Կռիւի ժամանակ միայն երկու հետեակ գնդեր են փախուստ դարձել, միւս զօրքերը կատարեալ կարգով են նահանջել։ Երկու կողմերի կորուստները շատ ծանր են։ Ինչպէս հաղորդում են, թիւրքերի կողմից սպանվածների թիւը հասնում է մի քանի հազարի։

«Standard» լրագրի պատերազմական թղթակիցը թագաժառանգ Կոնստանտինի նահանջումը դէպի Ֆարսալա համարում է մի շատ խելացի քայլ, որ կատարված է շատ փայլուն կերպով. «Յունաց զօրքը Թեսալիայում—գրում է թղթակիցը—դուրս պրծաւ, ինչպէս թռչունը որսորդի ցանցից։ Էդհեմ-փաշա զարմանալի ճարպիկութեամբ գործադրում էր իր ծրագիրը, նախ քան Օսման-փաշան հասաւ պատերազմի դաշտը, բայց յունաց թագաժառանգը կարողացաւ իր հակառակորդից աւելի խորամանկ լինել։ Եթէ Էդհեմ-փաշայից և յունաց աղբիւրներից ստացված տեղեկութիւնները հաւատանենք, պարզ կը լինի, որ թագաժառանգը կատարեց իր նահանջումը կատարեալ կարգով և այժմ նոր դիրքերի վրա ունի մի մեծ ոյժ, որ պատրաստ է կռուելու»։ «Standard»-ի թղթակիցը գովում է պրինցին այն պատճառով, որ նախօրօք կարողացաւ հասկանալ, թէ չէ կարելի պահվել Լարիսայում և դեռ ապրիլի 11-ին հրամայեց իր զօրքին յետ դառնալ։ «Նահանջումը—ասում է թղթակիցը—սկսվեց ապրիլի 11-ից լոյս 12-ի գիշերը, և շաբաթ օր Լարիսան բոլորովին դատարկված էր։ Յոյները կարողացան փչացնել մնացած թնդանօթները և տարան դաշտային արտիլերիան։ Նահանջումը ժամանակին էր, որովհետև շաբաթ օրն էլ թիւրքերը, տեսնելով որ յոյները հեռանում են, կատաղած յարձակվեցին նրանց վրա։ Բայց Էդհեմ-փաշայի զօրքերը ուշացել էին և յունաց գլխաւոր բանակի փոխարէն գործ ունեցան լոկ զօրքի ձախ թևի հետ, որը երկար դիմադրում էր թիւրքերի յարձակումներին և կարողացաւ Լարիսայի գրաւումը յետաձգել մինչև միւս օրը։ Դրանով նա ազատեց մնացած զօրքը, որը կատարեալ կարգ ու կանոնով նահանջեց դէպի Ֆարսալա։

ԴԱՐՁԵԱԼ ՀԱՅ ՈՐԲԵՐԻ ՄԱՍԻՆ

—

Կ. Պոլիս, ապրիլի 1/13-ին

Հայ որբերու մասին արդէն գրված է «Մշակի» մէջ թէ ինչպէս հարիւրաւորներ, հազարաւորներ՝ բոլորն ալ անչափահաս՝ կը դրկուին իրենց անծանօթ երկիրներ, անծանօթ անձերու, և թէ այս ամենը կը լինի հայոց պատրիարքարանի աչքին առջև, Օրմանեանի անտարբերութեամբ։ Բայց միթէ Օրմանեան սիրտ ու հաւատք ունի...

Հիմա կը լսեմք՝ թէ նորին սրբազնութեան սիրտը քիչ մը չարժեր է, նոր չրջաբերականներ, նոր կօնդակներ աստին անդին կը ղրկուին՝ որպէս զի տեղական առաջնորդներն ամեն զգուշութիւն ընեն որ հորքեր որդեգրող օտար հաստատութեանց մէջ հայ-եկեղեցւոյ զաւակներ հայերէն սովրին, հայ եկեղեցւոյ դաւանութեան մէջ մեծնան և եկեղեցական պաշտամունք վայելեն։ Առաջնորդութիւնք և դաղթականութիւնք ինամով արձանագրեն և հետզհետէ պատրիարքարանէ զեկուցանեն թէ իւրաքանչիւր օտար որբանոցի հաստատութեան մէջ որչափ հայ որբեր ընդունուած են, որ տեղերէ և որոց զաւակ են, և այլն։ Ասոր կըսեն le moutard après dîner.

Հարիւրաւոր որբեր գերմանացիք, լատինք և այլն Պոլսոյ մէջէն տարին՝ չեմք գիտեր ուր, և հիմա Օրմանեան պատրիարք, Հայրապետ, Եւրոպայէն, Ամերիկայէն և առաջնորդներէն կը փութայ տեղեկանալ թէ այդ որբեր «որ տեղերէ և որոց զաւակ են։»

Սակայն այդ որբերը իրենց ազգականի պատրիարքէն աւելի ճարպիկ, աւելի խղճոտ և աւելի ազգասէր եղան այդ 7—10 տարեկան տղայք՝ քան զՕրմանեան, աւելի պերճախօս եղան իրենց տխուր վիճակը աներկիւղ և անսասան ի լուր աշխարհի հռչակելու՝ և խնդրելով իրենց ազատութիւնը։ Ուրախութեամբ կը լսեմք թէ շատ մը որբեր (որոց սակայն շատերը հայր ու մայր ունեն՝ և որոնք գերման միսիոնարներու յանձնած են իրենց սրտի հատորները), չը դիմանալով իրենց դրուած հակա-եւրոպական կըրթութեանց՝ թողեր, փախեր են՝ իրենց ծնողաց գիրկը վերադառնալու փափաքանօք՝ լաւ համարելով իրենց հայրենի տան մէջ պատառիկ մը չոր հացը, քան գերմանական կրօնական կըրթութիւնը։ Կը յուսամ, թէ հայ ծնողաց օրինակ պիտի լինի այս տխուր իրողութիւնը։

Գերուկ

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲԵՄԻՑ

Կ. ՊՕԼԻՍ, 22 ապրիլի։ Դէպի Լուրոս տանող ճանապարհների վրա զօրաբաժիններ են ուղարկված հետախուզութեան համար։ Արապի վրա յարձակումը սկսած է։

ԼՕՆԴՕՆ, 22 ապրիլի։ «Times» լրագիրը հաղորդում է, որ Վօլօի չրջականերում մի անշան ընդհարում տեղի ունեցաւ թիւրքաց հեծելազօրքի և 4000 յունական հետևակ զօրքի մէջ երեք բատարէաներով։ Ցոյները յետ քաշվեցին։ Թիւրքերը մտան Վօլօ։ Ֆարսալի մօտ կենտրօնացած են 30,000 յունական զօրքեր, 60 թնդանօթներով։ Թիւրքերը սկսեցին յարձակում։ Ցոյները, որոնց դիրքերը թոյլ են, չէին պատերազմում։

ՊԱՐԻԶ, 22 ապրիլի։ Միսիայի գլխաւորների հետ խօսակցութիւնների ժամանակ յունական դեսպանը միջամտութեան ընդդէմ չէր։

Կ. Պոլսից ստացված հեռագիրները հաղորդում են, որ յոյները սկսեցին հեռանալ Ֆարսալից։ Ցոյները, ըստ երևոյթին, յետ են քաշվում դէպի Դօմոկօս—բնական ինքնապաշտպանութեան գիծը, որ կազմում են Օտրեան լեռները։ Ինչպէս երևում է, սկսել են և Արապից հեռանալ։

Կ. ՊՕԼԻՍ, 22 ապրիլի։ Թիւրքաց զօրքերը գրաւեցին Լուրոս։ Ցոյները չապով հեռանում են Էպիրոսից։

«Իդդամ» լրագիրը հաղորդում է. «Երբ Խայրի փաշայի զօրաբաժինը անցնում էր դէպի Կարադիչ, Տրիկալայի և Ֆարսալայի մէջտեղ, թիւրքերը գրաւեցին դաշտային ամրութիւնները Վելեստինօի մօտ։ Կռիւը չարունակվում է։ Ֆարսալայի և Վօլօի յարաբերութիւնները ընդհատված են։ Թիւրքերը վերցրին 10 թնդանօթներ։

Թիւրքաց երկու ականակիր նաւեր ծանծաղուտի մէջ խրվեցին Դարդանելում։ Նրանցից մէկը հանված է ծանծաղուտից։

ԼՕՆԴՕՆ, 22 ապրիլի։ Պենտեսիդադիայի մօտ յոյների կրած պարտութեան մասին «Daily Telégraph» լրագիրը հաղորդում է. 600 էվզոններ և 400 մարդիկ ուրիշ զօրաբաժիններից, երկու թնդանօթներով, կանգնեցին ինքնապաշտպանութեան համար բարձրութիւնների կատարների վրա. 600 էվզոններ, երկու թնդանօթներով, կանգնեցին զառիվայրի մէջտեղ։ Չորեքշաբթի, 4000 թիւրքեր արտիլերիայով մի քանի անգամ յարձակումներ գործեցին դիրքի վրա, բայց բոլոր յարձակումները յետ մղվեցին։ Հինգշաբթի թիւրքերը նորոգեցին իրանց յարձակումը։ Եւ որովհետև յոյների սպառած օգնական զօրքերը չեկան, այդ պատճառով դիրքերից յետ մղվեցին, կորցնելով 100 մարդ սպանված և վիրաւորված։ Արտիլերիան առաջինն էր, որ դադարեցրեց թնդանօթաձգութիւնը, իսկ էվզոնները քաջութեամբ դիմադրում էին։ Երեկոյեան ժամանակ սկսեցին յետ քաշվել ամենքը։ Օֆիցէրները իզուր էին աշխատում յետ նահանջումը կանգնեցնել, որը չուտով սարսափի բնաւորութիւն ստացաւ։ Գիւղացիները իրանց մեծ հօտերով փակում էին ճանապարհը։ Ուրբաթ առաւօտեան յոյները այն դիրքերի վրա կանգնեցին, որոնց վրա կանգնած էին պատերազմ ըսկսելու րոպէին։ Այժմ թիւրքաց հողի վրա ոչ մի յոյն չը կայ։

Կ. ՊՕԼԻՍ, 23 ապրիլի։ Թիւրքաց աղբիւրից ստացված տեղեկութիւնների համեմատ, հետախուզող զօրախմբերը մտան Լարիսա-Ֆարսալայից դէպի աջ մինչև Լուբասի։ Վելեստինօի և Պիլաֆտէպսի մօտ կռիւը չարունակվում է։ Թիւրքերը յոյս ունեն չուտով ճանապարհ բանալ դէպի Վօլօ։

Կ. ՊՕԼԻՍ, 23 ապրիլի։ Օսման փաշան յետ է կանչված։ Նա պնդելով խնդրում է, որ թոյլ տրվի իրան մնալ։

Այն տեղեկութիւնը, թէ յունական զօրքերը հեռանում են Էպիրոսից,—վաղաժամ են։

Արապի ծոցի ելքի մօտ յունական պատերազմական մի նաւ ընկղմվեց, ծոցում գտնվող յունական նաւերի ճանապարհը փակելով։

—

ՅԵՏԻՆԻԷ, 22 ապրիլի։ Այստեղ ժամանեց սերբիական թագաւորը։

ՊՐԵՏՕՐԻԱ, 22 ապրիլի։ Որովհետև Տրանսվաալը դաշնակցական պայման է կապել Օրանժեան հանրապետութեան հետ, բրիտանական կառավարութիւնը ասում է, որ Տրանսվաալը իրաւունք չունի մի այդպիսի դաշնագիր կապել, և պահանջում է ոչնչացնել այդ։

ՎԷՐՆԻ, 23 ապրիլի։ Ապրիլի 21-ին երկրաշարժ էր։

ՊԱՐԻԶ, 23 ապրիլի։ Հրդեհը քառորդ ժամում ոչնչացրեց բարեգործական մեծ բազարը, որ սարքել էին արիստոկրատ կանայք յօգուտ չքաւորների։ Հաշվում են մօտ 200 ազանվածներ, որոնց դիակները կատարելապէս ածուխ են դարձել։ Շատերը ծանր վիրաւորված են, շատերին չեն գտնում։

ԲՈՒԽԱՐԻՍՏ, 23 ապրիլի։ Նախկին վիճիատ—նախագահ իշխան Գիկա վախճանվեց։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Ապրիլի 22-ին

Լօնդօնի վրա	10 ֆունտ արժէ. .	93	ր. 95 կ»
Բերլինի վրա	100 մարկ — . .	45	»97⅝»
Պարիզի վրա	100 ֆրանկ — . .	37	»32⅝»
Ոսկի	— արժէ . .	—	» — »
Մաքսային կուպօններ	— . .	149	» — »
Բօրսային դիսկօնտ	— . .	5½	—7% »
4% պետական բէնտա	. . . . .	99	» — »
Ներքին 5% առաջին փոխառութ.		279	» — »
— — երկրորդ	—	244	» — »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի		210¾	» — »
5% պետական երկաթուղ. բէնտա		—	» — »
4% ներքին փոխառութեան . . .		98¾	— »
4½% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի		101⅛	» — »
Ազն. կալ. պետ. բանկի խաղարկութ.		—	» —
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի		101⅜	» — »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	.	—	» — »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.		101⅜	» — »
Մօսկվայի քաղաք. օբլիգացիաներ.		101¼	» — »
Օդէսայի —	— .	100⅛	» — »
Թիֆլիսի —	—	98¾	» — »
Թիֆլիսի կալ. բանկի 6%	— . .	101	» —
5% —	— — . .	99⅜	» — »
Բուխարայի —	— . .	101	» — »
5% —	— — . .	99⅜	» — »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ցանկացողները կարող են ստանալ Վարչութեան դիւանատան մէջ ամեն օր այն վերջնական ընտրողական ցուցակները, որոնք ուղղված են համաձայն քաղաքային գործերի նահանգական ատեանի որոշման, ներկայ տարվայ ապրիլի 8-ին, Թիֆլիսի Քաղաքային Դումայի ձայնաւորներ ընտրելու 1897—1890 թ. քառամեակի համար։

1—3

ՄԱՍՍԱԺ

Բժիշկների ղեկավարութեան տակ, պարապում եմ զանազան հիւանդութիւնների բժշկելով ՄԱՍԱԺՈՎ, և առողջական ԳԻՄՆԱՍՏԻԿԱՅՈՎ։ Հիւանդների ընդունելութիւնը՝ 5½—6½ ժամը երեկոյեան։ Աւչալեան փողոց, № 19։

33—147 ԳԷՈՐԳ ԽՈՍՐՈՎԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ 1897 թուի մայիսի 18-ին կը կայանայ Թիֆլիսի քաղաքային դումայի 1897—1901 քառամեայ չրջանի ձայնաւորների ընտրութիւնը։ Ժողովի տեղի և ժամի մասին առանձնապէս կը յայտարարէ քաղաքագլխի պ. պաշտօնակատարը։ Ապրիլի 18-ից մինչև մայիսի 2-ը քաղաքային ուպրավայի տան մէջ զբաղմունք եղած օրերում և ժամերում, ընտրողներից ընդունվում են ձայնաւորների համար նրանց առաջարկած կանդիդատների ցուցակները։ Մի և նոյն ժամանակ ընտրողներին տոմսակներ է տրվում ներկայ լինելու մայիսի 18-ի ժողովին՝ և գաղտնի քուէարկութեամբ ձայնաւորներ ընտրելու։ Այդ նոյն ժամանակամիջոցի ընթացքում քաղաքագլխի պ. պաշտօնակատարի անունով ընդունվում են այն անձանց գրաւոր յայտարարութիւնները, որոնք կը ցանկանան իրանք իրանց ձայնաւոր առաջարկել։ Ընտրողներից ցանկացողները կարող են Քաղաքային վարչութեան դիւանից ստանալ 1892 թուականի օրէնսդրութեան 24—33 յօդուածներից քաղուածներ, կանոններ և հրահանգներ ընտրութիւնների վերաբերմամբ, և բլանկներ ձայնաւորների համար առաջարկված անունները գրելու համար։ Ամեն մի ընտրողի առաջարկած կանդիդատների թիւը 96-ից աւելի չը պիտի լինի։ Իսկ եթէ պատահի որ մէկն ու մէկը որոշեալ թիւից աւելի կը լինի առաջարկած, այն ժամանակ հաշուելիս ի նկատի կառնվեն միայն առաջին 96-ը։ Կանդիդատների ցուցակների ընդունելութիւնը կաւարտվի մայիսի 2-ին, ցերեկվան ժամը 3-ին, որից յետոյ կնքված արկղը կը բացվի Քաղաքային Ուպրավայի ներկայութեամբ և վերջինս կը սկսի կազմել ձայնաւոր լինելու համար առաջարկված բոլոր կանդիդատների ընդհանուր ցուցակը, որոշելով իւրաքանչիւր կանդիդատի ստացած ձայների թիւը։ Հինգ ընտրողներից աւելի պակաս հոգով առաջարկված անձինքները չեն մտցնվի կանդիդատների ցուցակի մէջ, բացի նրանցից, որոնք իրանք իրանց կառաջարկեն։

Հաւատարմագրեր կարող են տրվել այնպիսի անձանց, որոնց մասին ցոյց է տրված քաղաքային օրէնսդրութեան 24-րդ յօդուածի 2 ծանօթութեան և 25—27 դ յօդուածների մէջ, 1) այն անձինքների կողմից, որոնք ընտրութեան մասնակցելու իրաւունք ունեն և չեն գտնվում խնամակալութեան տակ, թէև չեն հասած 25 տարեկան հասակի, 2) իգական սեռին պատկանողները, 3) հայրերը իրանց անբաժան որդիներին։ Իսկ 1892 թուականի քաղաքային կանոնադրութեամբ սահմանված չէ բացակայ ընտրողի ձայնի իրաւունքը մի ուրիշին տալ, ուստի և այդպիսի հաւատարմագրեր տրվել չեն կարող։

(№ 47) 1—3

Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը խնդրում է ընկերութեան անդամներին չնորհ բերել Ընկերութեան ընդհանուր ժողովին, որ նշանակված է սոյն ապրիլի 27-ին, առաւօտեան ժամը 11-ին, կարուձի դպրոցում (Գանովսկայա, № 25)։

Ժողովի պարապմունքներն են.

1) Անցեալ ընդհանուր ժողովի արձանագրութեան ընթերցումը.
2) Անցեալ տարվայ ելմուտքի հաշուի ընթերցումն ու հաստատելը.
3) 1897 թ. համար կազմած նախահաշուի ընթերցումն ու հաստատելը. և
4) Վարչութեան միամեայ գործունէութեան տեղեկագրի ընթերցումը։

(Հ. չ.) 1—2

ԿՕՆԿՈՒՐՍԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ,

որ հիմնված է մեռնող Իվան Բօնավէնտուրովիչ Տէլեֆաֆուսի գործերի համար, սրանով յայտարարում է, որ ինքն նորից դրել է հրապարակական աճքրդի այս ապրիլի 27-ին, 12 ժամին, կօնկուրսի չինութեան մէջ, Նիկոլայեւսկայա փողոցի վրա, տուն № 81, վեց դատարկ հողաբաժիններ, իւրաքանչիւր հողաբաժինը 256-ից մինչև 317 քառ. սաժէն տարածութեամբ, որոնք գտնվում են Մօլօկանսկայա փողոցի վրա, Ավճալեան ձիաքարշ երկաթուղու գծով, կայարանի մօտ, ուր առաջ գտնվում էր Տէլեֆաֆուսի փայտէ պահեստը։ Պայմանները կարելի է տեսնել Կօնկուրսային վարչութեան մէջ ամեն օր՝ երեկոյեան 5-ից մինչև 6 ժամը։ Աճուրդից առաջ իւրաքանչիւր հողաբաժնի համար անպատճառ պէտք է 500 ր. գրաւական մտցնել, առանց որի ոչ ոք չէ կարող մասնակցել աճուրդին։

2—3

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

խորհուրդը յայտնում է ի գիտութիւն ընկերութեան անդամների, որ ապրիլի 27-ին, կիրակի երեկոյեան ժամը 7-ին, Թիֆլիսի դումայի դահլիճում նշանակված է արտակարգ ընդհանուր ժողով, որի պարապմունքի առարկաները լինելու են։

1) Քննութիւն և հաստատութիւն Բաթումի ճիւղի 1897 թ. նախահաշուի և Ախալցխայի ճիւղի 1897 թ. յաւելուածական նախահաշուի։

2) Ընկերութեան խորհրդի մի անդամի և երկու փոխանդամի ընտրութիւնը։

3) Քննութիւն ընկերութեան 16 անդամների յայտարարութեան, որով խնդրում են բեկանել մարտի 2-ի և 16-ի կայացած ընդհանուր ժողովների որոշումները, իբրև ապօրէն և խորհրդի զեկուցումը ու կարծիքը նրա մասին։

Ընկերութեան անդամները հրաւիրվում են վերանորոգել իրանց անդամակցութիւնը, դիմելով խորհրդի գրասենեակը, Սերգէևսկայա փողոց № 16։

2—3

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՎ ՕԳՈՒՍՏԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ

ԼԵՄՈՒԶԵԼԻ

ՍԻՖՕՆ-ԷԼԵՎԱՏՕՐԸ

Բարձրացնում է ջուրը 35—70 և աւելի արշին

ԶՐԵԼՈՒ

Դաշտեր, այգիներ, պարէզներ և այլն։

ԶՈՒՐ Է ՏԱԼԻՍ

Քաղաքներին, կալուածներին, ամարանոցներին, գիւղերին։

ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ Է ԶՈՒՐԸ

Զորագլուխները, սարերը և ամեն տեղ, ուր ջրի կարիք կը լինի։

(№ 136) 15—15

Դիմել Լեւոն Խան-Ալեքսանդրեանին Тифлисъ, Мадеровская, собст. домъ.

Дозволено цензурою, Тифлисъ, 23 Апрѣля 1897 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 128.